

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության,
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային
անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և «Հայկական ատոմային
էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության միջև

ք. Երևան

«27» օգոստոսի 2013թ.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունն (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ)՝ ի դեմս նախարար Ա.Երիցյանի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ի դեմս նախագահ Ա.Մարտիրոսյանի և «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ ՀԱԷԿ) ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Մարկոսյանի կնքեցին սույն Պայմանագիրը <<Երևան-ՀԱԷԿ>> հեռաչափական համակարգի միջոցով սեյսմոլոգիական տվյալների ստացման և փոխանակման աշխատանքների բարելավման, ՀԱԷԿ-ի և շրջակա տարածքի սեյսմիկ ռեժիմի ուսումնասիրության նպատակով:

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Սույն Պայմանագրի առարկան է՝ բարելավել ՀԱԷԿ-ի և շրջակա տարածքի սեյսմիկ մոնիտորինգի իրականացումը, ապահովել GURALP 6TD սարքերով արդիականացված հեռաչափական սեյսմիկ ցանցի անխափան աշխատանքը, այն է՝ սարքերի տեխնիկական պարամետրերի պահպանումը, տեղի ունեցող իրադարձությունների գրանցումը հետագա վերլուծության, ինչպես նաև շահագրգիռ և այլ կազմակերպություններին տրամադրելու համար:

III. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. ՀՀ ԱԻՆ-ը պարտավորվում է.

1) ապահովել «Երևան-ՀԱԷԿ» հեռաչափական համակարգի անխափան

աշխատանքը.

2) ապահովել «Երևան-ՀԱԷԿ» հեռաչափական համակարգի կայանների գրանցումների (սեյսմոգրամների) մշակումը (ըստ ՀՀ ԱԻՆ համակարգում գործող սեյսմոլոգիական տվյալների մշակման կարգի) և վերլուծությունը.

3) 10 օրը մեկ անգամ ՀԱԷԿ-ին և Կոմիտեին տրամադրել տեղեկատվություն՝ ՀԱԷԿ-ից մինչև 50 կմ հեռավորության վրա տեղի ունեցած սեյսմիկ իրադարձությունների մասին.

4) ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնից ՀԱԷԿ-ին և Կոմիտեին հաղորդել (ֆաքս, էլեկտրոնային հասցե, հեռախոսազանգ), ՀՀ տարածքում զգացված՝ տարածաշրջանում տեղի ունեցած ուժեղ ($M \geq 5.5$) և ՀՀ տարածքում տեղի ունեցած ($M \geq 3.0$), երկրաշարժերի հիմնական պարամետրերը (տեղ, ժամանակ, մագնիտուդա), այդ տեղեկատվությունը ստանալուց հետո 15 րոպեի ընթացքում.

5) տեղեկացնել ՀԱԷԿ-ի և Կոմիտեի ղեկավարներին ու տրամադրել տեղեկատվություն՝ ՀԱԷԿ-ի տարածքում սեյսմիկ ակտիվության մակարդակի բարձրացման դեպքում.

6) ստեղծել միայն Կողմերին հասանելի տվյալների բազա, որտեղ Կողմերը (ՀԱԷԿ, ՀՀ ԱԻՆ և Կոմիտե) կտեղադրեն իրենց տեղեկատվությունը.

7) հրատարակել եռամսյակային կատալոգ՝ ՀԱԷԿ-ից մինչև 30 կմ հեռավորության վրա տեղի ունեցած սեյսմիկ իրադարձությունների մասին:

8) անհրաժեշտության դեպքում, հնարավորության սահմաններում, դիտակայաններում կատարել արդիականացման աշխատանքներ.

4. Կոմիտեն պարտավորվում է.

1) հնարավորության սահմաններում, միջազգային աջակցության ծրագրերի շրջանակներում, աջակցել դիտակայանների արդիականացման աշխատանքներին.

2) սեյսմիկ անվտանգության ոլորտում իր կողմից իրականացվող միջազգային ծրագրերի և համագործակցության մասին տեղեկատվություն տրամադրել սույն Պայմանագրի Կողմերին

3) իր կանոնադրական նպատակներից և այլ անհրաժեշտությունից ելնելով, սույն Պայմանագրի շրջանակներում ՀՀ ԱԻՆ կողմից տրամադրված տեղեկատվությունն ու այլ նյութերն սույն Պայմանագրի կողմ չհանդիսացող սուբյեկտներին տրամադրելու դեպքում նշել՝ հեղինակին՝ <<<< ԱԻՆ >>:

5. ՀԱԷԿ-ը պարտավորվում է.

1) սեյսմիկ անվտանգության ոլորտում իր կողմից իրականացվող միջազգային ծրագրերի և համագործակցության մասին տեղեկատվություն տրամադրել սույն

Պայմանագրի Կողմերին,

2) իր կանոնադրական նպատակներից և այլ անհրաժեշտությունից ելնելով, սույն Պայմանագրի շրջանակներում ՀՀ ԱԻՆ կողմից տրամադրված տեղեկատվությունն ու այլ նյութերն սույն Պայմանագրի կողմ չհանդիսացող սուբյեկտներին տրամադրելու դեպքում նշել՝ հեղինակին՝ <<<< ԱԻՆ >>:

6. Կողմերը կարող են.

1) սույն Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար, անհրաժեշտության դեպքում, կնքել լրացուցիչ ֆինանսական պայմանագրեր, ինչպես նաև դիմել այլ կազմակերպությունների ֆինանսական օժանդակությանը.

2) ՀԱԷԿ-ից 30 կմ շառավղով սահմանափակված տարածքում սեյսմիկ իրադարձությունների մասին տեղեկատվությունը չհաղորդել այլ կազմակերպություններին, առանց մյուս կողմերի համաձայնության:

IV. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության սահմանված կարգով:

V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

8. Կողմերն, իրենց կոնտակտային տվյալները և սույն Պայմանագրով նշանակված լիազոր պատասխանատուների մասին տեղեկատվությունը միմյանց են փոխանցում գրություններով:

9. Կողմերի միջև գրավոր տեղեկատվությունը պետք է ուղարկվի սույն կետով նշված գրություններով տրված հասցեներով:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10. Սույն Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները պետք է լինեն գրավոր և ստորագրված՝ եռակողմ:

11. Կողմերի կատարված բոլոր ծանուցումները պատշաճ են համարվում, եթե կատարվել են գրավոր՝ էլ. փոստի կամ գրության միջոցով սույն Պայմանագրի 8-րդ կետում նշված հասցեներով, հայերեն լեզվով:

12. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է մեկական օրինակ:

13. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Կողմերի վավերապայմաններն են՝

**Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարություն**

Հասցե՝ ՀՀ, Երևան, Դավիթբաշեն 4-րդ թաղ.

Ա. Միկոյան 109/8, 0054

Հեռ՝ +374 10 36 39 49

Էլ.հասցե՝ mes@mes.am

ՆԱԽԱՐԱՐ  Ա. ԵՐԻՅՅԱՆ



**ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային
անվտանգության կարգավորման պետական
կոմիտե**

Հասցե՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 4, 0010

Հեռ՝ +374 10 54 39 91

Էլ.հասցե՝ info@anra.am

ՆԱԽԱԳԱՀ  Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ստորագրություն)

Կ. Տ.

**«Հայկական ատոմային էլեկտրակայան»
փակ բաժնետիրական ընկերություն**

Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր,
0911

Հեռ՝ +374 10 28 85 80

Էլ.հասցե՝ anra@anra.am

ԳԼԽԱՎՈՐ  Գ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՏՆՕՐԵՆ

